Լևոն Էմ

Ուրախ եմ ծանոթանալ

Դան Էմ
Ուրախ եմ ծանոթանալ

https://litres.ru/73524178
SelfPub; 2026

Аннотация

Այս հետաքրքիր գիրքը ներկայացնում է մարդկանց տարբեր կողմերը, նրանց յուրահատկությունները, կյանքի նկատմամբ յուրովի վերաբերմունքը: Պատմություն է ընկերության, սիրո, հավատարմության, բարդ, բայց միևնույն ժամանակ հասարակ հարաբերությունների մասին: Մեզ մեկ անգամ տրվող հրաշալի այս կյանքի անակնկալներն ընդունելու կամ մերժելու, պայքարելու և կայանալու մասին է: Այստեղ կարող ենք ականատես լինել, թե ինչպես են փոխվում հերոսները, աճում որոշումների մեջ, դառնում համարձակ Սիրո մեջ:

Содержание

Глава 1 4
Глава 2 19
Глава 3 31
Конец ознакомительного фрагмента. 49

Դան Էմ
Ուրախ եմ ծանոթանալ

Глава 1

Այսօր այնքան ուրախ ու շփոթված եմ, որ իմ տուն ետ դառնալն ավելի երկար և արկածներով լի թվաց: Երթուղայինով տուն վերադառնալիս բաց թողեցի իմ կանգառը, չորս կանգառ անցա, հետո ուշքի գալով՝ իջա և ոտքով ետ դարձա քրոջս տան ուղղությամբ: Երբ հասա մեր կանգառ, համոզվեցի, թե ինչքան շփոթված եմ և ոգևորված:

Ինչքա՜ ն եմ շփոթված ես...

Տան մուտքի մոտ հասնելով, հիշեցի՝ մի քանի հարևանի կողքով անցա առանց բարևելու: Ես երբեք անշնորհք չեմ եղել, այլ այստեղ իմ ուրախությունն է մեղավոր: Կարծես թռչում եմ քայլելու փոխարեն: Այսօր վերջապես ինձ դրական պատասխանեցին: Ես կաշխատեմ, կկայանամ այս հողի վրա, վերջապես կունենամ իմ եկամուտը: Այս միտքը հանգիստ չէր տալիս ինձ ամբողջ ճանապարհին: Վաղուց այսքան ուրախ չէի զգացել ինձ: Վազեցի տուն: Քույրս ինչպես միշտ խոհանոցում էր: Վազեցի գրկեցի.

-Ուրաա՜, ինձ վերցնում են աշխատանքի:

-Ուրաա՜,- գոչեց քույրս,- ի՜նչ լավ է սիրելիս, դե պատմի տեսնեմ:

-Լսու՞մ ես, տա-տա- դա-դամ, ինձ տվեցին հնարավորություն փորձաշրջան անցնելու, ասեցին վաղվանից 8-10 օր փորձաշրջան կանցնեմ, հետո պարզ կլինի:

-Հետո՞, էլի հետո, ես վախենում եմ այդ հետոյից: Պատմի տեսնեմ ի՞նչ տեղ է, ի՞նչ պայմաններ են:

-Նարս, մի անհանգիստացի, ամեն ինչ լավ կլինի, ես զգում եմ, որ կաշխատեմ այնտեղ:

-Դու անցած անգամ էլ էիր այսքան ինքնավստահ:

-Ես մեղք չունեմ ,դու լավ գիտես անցած անգամների մասին:

-Իսկ սա ո՞ր հայտարարությամբ էիր գնացել, ի՞նչ կազմակերպություն է:

-<<Ոսկե սերունդ>>է կազմակերպության անվանունը: Գնացի ինձ առաջին հարկում ընդունեց պատասխանատու աշխատակիցը, հարցազրույցից հետո ասաց <<Վաղվանից եկեք փորձաշրջանի, բայց կարող եք չանհանգստանալ, չեմ ուզում խոստանալ, բայց հավանաբար կմնաք մեզ մոտ աշխատելու: Մեր գլխավոր տնօրենը նոր նախագիծ ունի, որով խրախուսում է անփորձ կադրերին աշխատանքի ընդունելը>>:

- <<Ոսկե՞ սերունդ>>:

Այնքան ոգևորված էի, որ միանգամից չնկատեցի Նարինեի դեմքի արտահայտությունը: Մի քանի անգամ կրկնեց անվանումը կազմակերպության, ապա տխուր կամ հիասթափված՝ ավելացրեց .

-Բայց ինչու՞ այնտեղ, չեմ հասկանում, այս քաղաքում էլ ուրիշ տեղ չկա աշխատելու:

-Բայց ի՞նչ խնդիր կա քույրիկս, ինձ արդեն դուր է գալիս իմ ապագա աշխատավայրը: Գիտե՞ս այնպիսի տպավորություն էր կարծես հարազատ վայրում լինեի: Բայց դա ուրախությունից էր երևի: Մնացածն արդեն վաղը կիմանամ, անհամբեր սպասում եմ վաղվան: Մինչև վաղը ինչպես եմ դիմանալու՝ չգիտեմ:

Բայց Նարինեի հայացքը և տրամադրությունը փոխվում էր վայրկյան առ վարկյան՝ ավելի մտազբաղ դառնալով: Անհանգստանում է անշուշտ, միշտ ինձ համար լավագույն է կամենում:

-Նարինս մի անհանգստացի, ամեն բան լավ է լինելու,- փորձեցի հանգստացնել նրան:

-Ես քեզ խորհուրդ եմ տալիս չշտապել, էլի տարբերակներ նայիր, ավելի հարմար տարբերակներ հաստատ կլինեն:

-Ես գտել եմ այն, ինչ փնտրել եմ այսքան ժամանակ:

Այնքան հոգնած էի զգում ինձ, որ քրոջս համոզել ինչ որ բան՝ չէի ցանկանում:

***

Երկու տարուց ավել էր, ինչ ավարտել էի պետական համալսարանը և ունեմ հաշվապահի մասնագիտություն: Իմ մասնագիտությամբ էլ ինքնակենսագրականս ուղարկել էի մի քանի աշխատանքի տեղավորման գործակալություններ, որտեղից էլ ստանում էի առաջարկություններ: Շատ

լավ առաջարկություն էի ստացել. շինարարական մեծ կազմակերպություն էր, աշխատավարձը բարձր, ինչը ամենակարևորներից էր ինձ համար: Սկզբնական երեք օրը մեծ հաճույքով էի գնում: Անձնակազմի մեծ մասը երիտասարդ տղամարդիկ էին ու մեծ ուշադրությամբ էին ինձ շրջապատում, ինչն ինձ սկզբում դուր էր գալիս: Հաճախ սուրճ էին հյուրասիրում, շուրջս պտտվում էին, հումորներ էին անում, իրենց օգնությունն էին առաջարկում: Սկզբում զվարճալի էր նույնիսկ, երբ տեսնում էի, թե ինչպես են տղաները խառնվում իրար, փորձում մեկը մյուսից առաջ անցնել՝ աչքի ընկելու համար: Զվարճալի էր սկզբի մի քանի օրը: Հետո այս ընդհանուր տեսարանը սկսեց հոգնեցնել, տհաճություն պատճառել այդ չափից դուրս ուշադրությունը, նույնիսկ վախեցնել: Կենտրոնանալը աշխատանքի վրա դժվարանում էր և՛ իմ, և՛ նրանց համար: Իրենց իհարկե հասկանալի էր. առավոտից մինչև ուշ երեկո աշխատում էին, հանգստյան օր միակ կիրակին էր, այն էլ տնօրենը երբեմն առաջադրանքներով էր զբաղեցնում: Աշխատակազմի միակ երիտասարդ աղջիկը ես էի, այն էլ ոչ տգեղ: Բայց երբ սկսեցի ինձ որոշակի չափով սառը և հեռու պահել, տղաների այս փոքր ինչ ամբոխից, առաջացավ տհաճ և լարված մթնոլորտ: Որոշեցի հրաժարվել իմ այնտեղ աշխատելու հնարավորությունից: Հաջորդ առաջարկն ուսումնական կենտրոնների գլխավոր մասնաճյուղում էր: Բիզնեսը բաղկացած էր մի քանի կենտրոններից, որոնք դասավանդում էին մի քանի դպրոցական առարկաներ և

տարբեր սպորտաձևեր: Անձնակազմը բարի էր, ակտիվ, երիտասարդ աղջիկներ և տղաներ էին: Բայց էլի այստեղ. բա՜յց . . . Ամեն աշխատանքային օրվա ավարտին մնում էին զվարճանալու: Երեխաների հետ էին աշխատում, նյարդերը թուլացնել էր պետք, խմում էին ալկոհոլ, երաժշտություն միացնում և զվարճանում: Եվ դա նորմալ էր երիտասարդ մեր տարիքում: Եվ քանի որ կադրերի բաժնի աշխատակիցները հաճույքով միանում էին նրանց, իմ պատճառաբանությունները թե ալկոհոլ չեմ սիրում, չեմ օգտագործում, օրվա վերջ հոգնում եմ և շտապում եմ տուն՝ դիտվում էր որպես անջատում անձնակազմից և դատվում էր խիստ: Ահա և այստեղ աշխատեցի մեկ ամիս և հեռացա: Քույրս իհարկե դեմ էր իմ հեռացմանը երկու դեպքում էլ, ասում էր այդպես ես փորձ ձեռք կբերեմ, կտարբերեմ կարելին – անկարելիից, թացը - չորից, որ պետք է լեզու գտնել յուրաքանչյուր մարդու հետ: Չնայած ես ինձ հանգիստ մարդ եմ համարում, չեմ սիրում բողոքել կամ ստեղծել լարված իրավիճակ, բայց քրոջս պես համբերատար չեմ կարծում ինձ:

Քույրս՝ Նարինեն աշխարհի ամենալավ քույրն է: Նա գեղեցիկ է ու խելացի: Ամուսինն՝ Արմենը նույնպես հիանալի մարդ է: Նրանք ինձ գրկաբաց ընդունեցին, երբ ես դպրոցն ավարտելուց հետո, մորաքրոջս տանից տեղափոխվեցի իրենց մոտ մայրաքաղաք՝ սովորելու: Ծնողներիս չեմ հիշում՝ փոքր եմ եղել, երբ կորցրել ենք նրանց, իսկ մորաքույրս իմ ու Նարինեի խնամքը վերցրել էր իր վրա

մինչև մեր դպրոցն ավարտելը: Ես նույնիսկ չեմ էլ կարող չափել, թե որքան եմ իրենց շնորհակալ ու պարտական:

Նոր զգացի հոգնածություն: Երկար ժամանակ էր աշխատանք էի փնտրում, մերժում էին՝ պատճառաբանելով աշխատանքի փորձ չունենալս: Նարինեն ու Արմենը չէին թողնում ինչ-որ բանի կարիք ունենամ, բայց ես ուզում էի աշխատել ու վաստակել ինքս: Ուզում էի այնքան վաստակել, որ քրոջս ընտանիքին շնորհակալությունս կարողանամ նաև նյութապես հայտնել: Մեծ հույս ու համոզմունք ունեմ՝ վաղվանից նոր կյանք է սկսվում ինձ համար:

Հաջորդ օրը ավելի հրաշալի էր, քան նախորդը: Գարնան սկիզբն էր և դեռ սառն էր, բայց սիրտս ներսից ինձ ջերմացնում էր՝ ամառվա միջին ամսվա պես: Սիրտս ուրախ էր ու լցված գարնանը բնորոշ գեղեցիկ ծաղիկների գույներով: Այնքա՜ն ծրագրեր էի կազմել այս ամիսների ընթացքում և ամենը կախված էր աշխատանք գտնելուս հետ: Բայց քանի քայլերս հեռանում էր տանից, այնքան սիրտս անհանգստությամբ էր լցվում՝ նոր մարդիկ, նոր միջավայր, նո՜ր, նո՜ր: <<Ոչի՛նչ Սոնա, ոչինչ, հիշի՛ր երեկ որքան լավ անցավ, ամեն ինչ լավ կլինի>>.- հանգստացնում էի ինքս ինձ:

Արդեն տեղում էի: Շենքը մեծ էր և գեղեցիկ: Տեսնես ո՞վ է այս գեղեցկության հեղինակ, հաստատ գովասանքի արժանի է:

Տասներկու հարկ է կարծես թե, այնպես է կառուցված,

որ դրսից դժվար է հաշվելը: Շենքի ներքևից մինչ մեջտեղը դեղին էր, այնուհետև մգանում էր և մոտ էր ավելի նարնջագույնին: Վերևի մի քանի հարկը խիստ տարբերվում է՝ ավելի առաջ էր դուրս եկած քան ներքևի հարկերը, բայց այնքան համահունչ էր իրար, որ ժամանակդ չես ափսոսում՝ կանգ առնելու և գնահատելու այս գեղեցկությունը:

Դեռ նոր ոտքս ներս չդրած՝ արագ քայլելով ինձ մոտեցավ Աստղիկը՝ ով երեկ անցկացրեց իմ հարցազրույցը:

-Սոնա՞:

-Այո, բարի լույս,- ես զարմացած նայում էի նրա անհանգիստ հայացքին,- վերևում ձեզ են սպասում, խնդրեմ եկե՛ք ինձ հետ:

-Այո իհարկե:

Մենք արագ քայլերով գնում էինք մի լայն միջանցքով, որն ինչպես հասկացա տանում էր մեզ վերելակի կողմը:

-Ներեցեք, ի՞նչ-որ բան է պատահել, դուք շփոթված եք երևում,- հարցրեցի:

-Ոչ, ոչ, ո՛չ մի բան, ի՞ նչ պետք էր պատահեր, ուղղակի այսօր ուշացել եմ:

Վերելակով բարձրացանք երրորդ հարկ: Այստեղ ինձ դիմավորեց մեկ այլ աղջիկ, ով սկզբից ինձ նայեց տարօրինակ զարմացած, թե՞ ուրախ- զարմացած, այդպես էլ չհասկացա .

-Համեցեք, բարի լույս Սոնա, ես Աննան եմ, տնօրենի օգնականը, ուրախ եմ ծանոթանալ ձեզ հետ:

-Բարի լույս, ես նույնպես:

-Երևի նկատեցիր, այստեղ դիմում ենք միմյանց անունով, մեր տնօրենը հրաշալի մարդ է, և հորդորում է մեզ լինել միմյանց նկատմամբ բարեհամբույր, նրբանկատ և ունենալ ընկերական հարաբերություններ: Այսպիսով անունով միմյանց դիմելը նույնպես նպաստում է դրան,- ժպտաց և հայացքով սպասում էր իմ պատասխանին:

-Այո, իհարկե,- նույնպես ժպտալով պատասխանեցի:

Աննան գեղեցիկ և շքեղ տեսք ուներ: Նա խոսում էր հանգիստ և ինքնավստահ, իսկ ես մտքումս հարցեր էի հյուսում<<ինչպե՞ս է հասցնում այսքան գեղեցիկ տեսք պահպանել այս լարված աշխատանքի մեջ, տեսնես քանի՞ մասնագետ է աշխատում նրա արտաքին տեսքն այսքան գեղեցիկ ապահովվելու համար>>:

Նա ինձ կարճ ներկայացրեց ներկայիս բիզնես համալիրն: Այս շենքն առաջինից մինչև երրորդ հարկն ունի մի քանի գործակալություն, որոնք զբաղվում են տարբեր բիզնես ծրագրերով: Իմ աշխատանքն առայժմ հաշվապահի օգնական, հետո ժամանակը և իմ աշխատունակությունը ցույց կտա:

-Այստեղ ունենք երկու օրինակից պայմանագիր, ես խորհուրդ կտայի հիմա ստորագրել:

-Ի՞նչ պայմանագիր է: Ես դեռ փորձաշրջան նոր պետք է անցնեմ, մի՞թե արդեն պայմանագիր:

-Սա պայմանագիր է, որով հաստատվում է, որ դու անցնում ես փորձաշրջան, և փորձաշրջանի ավարտից հետո, եթե մնաս մեզ մոտ աշխատելու, ուրեմն մենք

պարտավորվում ենք քեզ հավելյալ վճարել այս օրերի համար նույնպես: Եթե երկմտում ես, կարդա փաստաթուղթը մանրամասն, կամ մտածիր, հետո ստորագրիր կամ հրաժարվիր առհասարակ, քո կամքն է:

-Ո՛չ, դրա կարիքը չկա, ես նույնիսկ շնորհակալ եմ,- ուրախացա,- եկեք ստորագրենք:

Ստորագրեցինք: Աննան վերցրեց փաստաթղթերը, նայեց ինձ ոտքից գլուխ զննող հայացքով.

-Հիմա գնանք իմ ետևից, ես քեզ կուղեկցեմ տնօրենի մոտ, իսկ մնացածը տեղում, լա՞վ:

-Լավ:

Ես հետևեցի Աննային: Տարօրինակ բան փոխվեց նրա հայացքի մեջ: Խոսում էր ինձ հետ, բայց հայացքը փախցնելով խուսափում էր իմ հայացքից: Քայլում էր անհանգիստ՝ նայելով շուրջը, կարծես իրեն հետևում էին: Սիրտս սկսեց անհանգստանալ՝ ինչու՞ էր ինձ այդպես զննում, գուցե՞ պատշաճ չեմ հագնվել: Կամ Ինչու՞ ծանոթանալ տնօրենի հետ: Այդ ո՞ր օրվանից են հասարակ իմ պես փորձաշրջան անցնող աշխատակցին ծանոթացնում այսչափ <<մեծ>>մարդու հետ: Մինչ գնում էինք դեպի վերելակը, ես հիշեցի երեկվա իմ բացահայտումներն այս հաստատության մասին ու իմ ապագա տնօրենի մասին: Հարցազրույց էին հրապարակել նրա հետ՝ հարուստ, հաջողակ, չամուսնացած, բարերար: Ներկայացնում էին իբրև հրաշալի տնօրեն և որպես աննման անձնավորություն: Եվ ամեն տեղ նրան ուղեկցում էր նրա օգնական՝ Աննան,

միշտ շքեղ հագնված, միշտ զինված հարցերի խելացի և բովանդակալից պատասխաններով:

Վերելակով բարձրանում էինք, ինչպես հասկացա ամենաբարձր հարկն (ինը հարկից հետո թիվ չկար, միայն կլոր կանաչ կոճակ էր):

Վերելակի դուռը բացվեց: Աննան առաջ գնաց և առանց նայելու իմ կողմն՝ ասաց.

-Հետևի՛ր ինձ:

Վերելակից դուրս գալուց հետո կարծես ուրիշ շինություն մտնեինք: Առաջին բանը, որ մտքովս անցավ՝ <<մենք նու՞յն շենքում ենք>>: Ի տարբերություն առաջին և երրորդ հարկերի՝ այստեղ լայն միջանցք չէր բացվում: Վերելակից ուղիղ, աջ և ձախ կողմերում մի շարքով երևում են աշխատասենյակներ: Ի տարբերություն ներքևի հարկերի՝ այստեղ սենյակները թափանցիկ չեն: Եվ երբ գլուխս շրջեցի աջ և ձախ, ոչ միանգամից, բայց մի քանի անգամ նայելուց հետո՝ հասկացա, որ այս բոլոր սենյակները շրջան էին կազմում վերելակի շուրջն՝ այսինքն այս տարածքն կլոր էր: Ա՜յ քեզ զարմանալի բան: Այսպիսի բան մտքովս էլ չէր անցնում, երբ որ հետևում էի փողոցի կողմից, ահա թե ինչու առաջին տպավորությունս այնպիսինն էր՝ իբրև ուրիշ շենքում եմ հայտնվել: Մտանք մի սենյակ, մեծ և լուսավոր: Սենյակի մեջտեղում դրված էր կլոր ապակուց սուրճի սեղան, իսկ այն շրջապատած էր բազմոցներով: Աննան շրջվեց դեպի ինձ.

-Սպասի՛ր այստեղ:

Աջ կողմում երևում էր տնօրենի աշխատասենյակն՝ այստեղ արդեն ամբողջն ապակուց էր: Աննան մտավ նրա մոտ: Տեսնում էի տնօրենին նստած գրասեղանի մոտ: Ես ճանաչեցի նրան հարցազրույցում տեսած լուսանկարից: Աննան մոտեցավ նրան և հայտնում էր ինչ որ բան՝ չէր լսվում ոչինչ: Հանկարծակի տնօրենը կանգնեց և միանգամից նայեց իմ կողմը: Ես շփոթվեցի, սիրտս կարծես կանգ առավ նրա ուղիղ հայացքից: Նա նայում էր ինձ ու պարզ չէր՝ զարմացա՞ծ է, թե՞ զայրացած, կամ կարծես երկուսը մեկում: Չկարողացա մի քանի վարկյանից ավել նայել նրան՝ սիրտս ավելի վախով լցվեց:

Դուռը բացվեց: Մտավ նա և Աննան: Ես մի փոքր առաջ գնալով՝ բարևեցի: Նա չպատասխանեց բարևիս: Նստեց ինձանից ձախ՝ բազմոցին: Աննան խախտեց այս անչափ անհարմար լռությունը.

-Սոնա, սիրելի՛ս փորձիր հասկանալ և ընդունել: Սկզբում իհարկե դժվար կլինի, բայց այլ ելք չկա:

Ապշած նայում էի: Տնօրենը շրջվեց Աննայի կողմը և հայացքով լռեցրեց:

Ահա թե ինպես են հայտնում վատ լուրն անբուժելի հիվանդության կամ հարազատի կորուստի մասին, իմ հետ ի՞նչ-որ բան այն չէ՞, բայց ինչու՞ հենց իրենք ինձ պետք է հայտնեն:

Տնօրենը վեր կացավ տեղից, մի քանի քայլ արեց սենյակում, ապա վերադարձավ նստեց իր տեղում և նայեց խիստ ինձ վրա.

-Դու մինչ այստեղ բարձրանալը երկու պայմանագիր ես ստորագրել:

-Այո և շնորհակալ եմ ձեզ ինձ հնարավորություն տալու համար:

-Դու լսե՞լ ես ամուսնական պայմանագրերի մասին, այսինքն հաշվարկով՝ այսպես ասած կեղծ ամուսնությունների մասին:

-Լսել եմ:

-Դա երկշահավետ գործարք է:

-Պարզ է:

-Քո ստորագրած փաստաթղթերից մեկը ամուսնական պայմանագիր էր, մյուսը՝ գումարի փոխանցման և պարտավորության պայմանագիր,- ասաց Աննան:

-Ներեցեք, Ի՞նչ պայմանագիր:

Ինձ թվաց ես սխալ լսեցի, բայց նրանց լուրջ և ինքնավստահ հայացքից՝ սկսեցի լարվել ավելի:

-Ինչպե՞ս թե, դուք կատակու՞մ եք,- ես ժպտացի, սա երևի հարուստների կատակ անելու ձևերից է:

-Մի՞թե դու այնքան միամիտ ես, որ չես տարբերում կատակն ու լուրջը,- ձայնը բարձրացնելով՝ ասաց տնօրենը:

Ես կորցրեցի խոսելու և նույնիսկ մտածելու կարողությունս:

-Դու հիշու՞մ ես ինչ թղթեր ես ստորագրել, դու կարդացե՞լ ես մինչ ստորագրելը,- շարունակեց նա, ապա շրջվեց Աննայի կողմը,- ես մտածում էի կկարդա: Որքան կյանք է նրան անհրաժեշտ, որ նույն սխալները չանի:

-Ի՞նչ եք ասում, ես ոչինչ չեմ հասկանում:

-Դու վերցրու կարդա ու գուցե կարողանաս հասկանալ, եթե իհարկե ընդունակ ես:

-Դուք ձեր սահմաններն անցնու՛մ եք, իրավունք չունե՛ք ինձ վիրավորելու:

-Դու դեռ չգիտես ինչ է նշանակում անցնել սահմաններն: Այս պայմանագրերն ինձ իրավունք է տալիս անցնելու շատ չափեր ու վարվելու ոնց հարմար գտնեմ:

Միտքս կարծես սառչում էր, ես չէի հավատում, որ այս ամենն իմ հետ է կատարվում: Սա ինչ որ թյուրիմացություն է:

-Դու ստորագրել ես մի փաստաթուղթ, որով ես քեզ այնքան գումար եմ տրամադրել, որի մասին չէիր էլ կարող երազել, փոխարենը դու պարտք ես ինձ, իսկ մյուս փաստաթուղթն՝ ամուսնական պայմանագիր է:

-Դուք խե՞նթ եք: Իմ ինչի՞ն է պետք ձեր փողերը, ես չեմ խնդրել ձեզանից ոչինչ, կամ ի՞նչ ամուսնություն: Ես այստեղ ուրիշ հարցով եմ եկել:

-Փորձիր ընդունել այս ամենը,- պատասխանեց Աննան,- համոզված եմ՝ դու կարող ես:

-Լա՛վ, ես հասկացա, դուք մնացել եք ազատ և որոշել եք զվարճանալ նոր աշխատողի նյարդերի հաշվին, սա ձեր զվարճանքներից մեկն է,- վեր կացա և ուղղվեցի դեպի դռան կողմը:

-Նստի՛ր, - հրամայեց տնօրենը,- դու չես կարող դուրս գալ այստեղից:

Ես չլսելու տվեցի: Նա իմ հետևից հասավ, բռնեց ձեռքս:

Աննան փորձում էր հեռու տանել նրան ինձանից:

-Դուք ինձ իրավունք չունե՛ք բռնի այստեղ պահելու:

Հանկարծ ինձ ուժով տարավ դեպի սենյակի կենտրոնը և ուժով ուսիս սեղմելով՝ փորձում էր նստեցնել բազմոցին:

-Դու կմնա՛ս այստեղ, դու կանե՛ս այն ամենն, ինչ ես քեզ կասեմ, ես հաշվի չեմ առնի, թե ով ես դու և ինչքան գումար եմ փոխանցել: Եթե դու քո ստորագրած պարտավորությունները չկատարես, այստեղից երբեք դուրս չես գա:

Չէի կարողանում հավատալ, որ այս ամենն ինձ հետ էր կատարվում: Ես երևի սարսափ երազ եմ տեսնում, հիմա կարթնանամ: Բայց ոչ մի կերպ չէի կարողանում ազատվել նրա ամուր ձեռքերից: Զգացի, որ պայքարել ոտքի վրա կանգնելու համար, էլ ուժերս չի բավարարում, ստիպված նստեցի: Ապա պարանոցիս ուժգին ցավ զգացի, դա երևի նրա ամուր ձեռքի սեղմելուց առաջացավ, ու ցավն ավելի էր ուժեղանում: Ես ուզում էի բղավեմ, բայց չէի կարողանում, դժվարանում էի նունիսկ շնչել, լսել՝ նույնպես: Քիչ առաջ Աննայի բղավոցն էլ չէի լսում: Թվում էր՝ հիմա կլռի ամբողջ աշխարհն: Աստիճանաբար նրա ձերքերը քաշվում էին ինձանից ու նրա ահարկու պատկերը՝ նունպես: Ահա Աննան այս ու այն կողմ էր վազում: Մի քանի տղամարդիկ խառնված էին իրար, իսկ մեկն էլ բռնել է նրա թևերը, թափահարում էր այն հրեշին: Ես տեսնում էի այս ամենը, բայց դեռ չէի լսում և օգնություն կանչել նույնպես չէի կարողանում: Այլևս աչքերս բաց չէի կարողանում պահել,

միայն դեմքիս հպումից մի փոքր կարողացա բացել և տեսա մի տղամարդու, ով թափահարում էր տնօրենին: Հետո նույն մարդը ինձ որոշ բաներ էր ասում, դեմքս էր շոյում, փորձում էր գրկել և նստացնել ինձ: Ո՞վ է այս մարդը, փորձու՞մ է ինձ օգնել:

Եվ ամեն բան փակվեց աչքերիս առաջ և գիտակցությունս շուտով նահանջեց...

Глава 2

Երբ աչքերս բացեցի, միանգամից հիշեցի ինձ հետ կատարվածը. դող անցավ ամբողջ մարմնովս, հետո <<երազ էր>>.- ասեցի: Բայց ո՞չ: Ես մի անծանոթ սենյակում էի: Նստեցի. մահճակալի մեջ էի: Նայեցի շուրջս: Մահճակալի ձախ կողմում բացմոցի վրա նստած քնած էր Աննան: Վեր թռավ տեղից, երբ ձայն տվեցի.

-Ինչպե՞ս ես, ինչ որ տեղդ ցավու՞մ է,- անմիջապես հարցրեց:

Վեր կացա տեղիցս, կարգի բերեցի ինձ, լավ է հագուստս վրաս էր, թէ չէ կսարսափեի: Պարանոցս ցավում էր, գլուխս՝ նունպես:

Ես շտապեցի դուրս գալ սենյակից, չպատասխանելով Աննայի հարցերին:

-Դու այստեղից չե՛ս կարող դուրս գալ, փախչել չես կարող:

-Փախչե՞լ,- վրթոհվեցի ես,- Ինչի՞ց, ու՞մից կամ ինչի՞ համար,- կանգ առա,- ասա՛ ինձ, ինքը հոգեկան խնդիրներ ունի՞ կամ ի՞նչ ներկայացում էր դա: Թե՞ դուք հարուստ եք ու ամեն ինչ ձեզ կարող եք թույլ տալ:

Չսպասելով պատասխաններին՝ դուրս եկա միջանցք: Աննան կանչում եր իմ ետևից ու ինչ-որ բաներ էր ասում, որը ես չէի լսում:

Կանգնեցի՝ ուզում էի զուշակել ճիշտ ելքը: Շրջվեցի դեպի

Աննան.

-Պայուսակս, հեռախոսս իհարկե չեք տա:

-Ո՛չ հիմա,- ասաց:

Գնացի աջ: Հետաքրքիր էր. Աննան չէր էլ փորձում ինձ կանգնեցնել: Ես իր աչքերում տեսնում էի ափսոսանք, բայց նաև վստահություն, որ իմ ջանքերն իզուր են և հաջողություն չեն ունենա:

Բայց ես այսպես հեշտ չեմ հանձնվի, իրենք ինձ գերի չեն վերցնի:

Աջ կողմում դուռ տեսա, բայց սա էլ երևի հերթական սենյակներից էր: Մի քիչ էլ գնացի դեպի ձախ երևաց մի դուռ, որը տարբերվում էր մնացածից: Մոտեցա որ բացեմ. չհաստրեցի՝ դուռը բացվեց և քիչ մնաց հարվածի ինձ: Ես ետ քաշվեցի. մի տղամարդ էր՝ կարծես թե ծանոթ, ինչ որ տեղ տեսել եմ այս մարդուն:

-Երեք ժամ քնելուց հետո պետք է որ արդեն լավ լինեք,- ասաց այս ծանոթ - անծանոթը՝ հանգիստ՝ նայելով ինձ ոտքից գլուխ,և այնպիսի հայացքով, կարծես թե ճանաչում էր ինձ.

-Հետևե՛ք ինձ խնդրեմ:

-Ու՞ր, ցույց տվեք ինձ ելքն այստեղից:

-Լսե՛ք, դա աստիճաններն են, այո՛ դուք ճիշտ ուղղությամբ էիք գնում, բայց այս երկաթե դռան գաղտնաբառն այստեղ ընդամենը մի քանի հոգի ունի, որոնց թվում իհարկե դուք չկաք, և ընդանրապես այստեղ ամեն սենյակը մուտքագրով է, մուտքն ու ելքը սահմանափակ

են, նունիսկ վերելակն: Առանց իմ իմացության, Աննայի ու պարոն Առաքելյանի, այստեղ ոչինչ չի կարող շարժվել:

Ես ակամայից քմծիծաղ տվեցի. չկարողացա զսպել ինձ և անկեղծ ասած՝ չէի էլ ուզում զսպել: Ես փոքրուց էլ անկոտրում եմ եղել, ու հիմա ի՞նչ, պետք է ենթարկվեի չգիտեմ ում ու չգիտեմ ինչի՞ համար:

Ինձ արդեն հետաքրքիր էր դառնում այս խաղն, ովքե՞ր են այս մարդիկ, ի՞նչ էր իրականում այստեղ կատարվում: Ես սիրել եմ արկածներ և հանելուկներ, ներսիս չարաճճի երեխան կարծես գլուխ էր բարձրացնում:

-Ի՞նչ եք ասում պարոն, առանց ձեր իմացության ելք ու մուտք չկա՞: Ես պետքարան եմ ուզում, կուղեկցեք ինձ, թե չէ ոչ տեղը գիտեմ, ոչ էլ դռան գաղտնաբառն ունեմ,- ժպտացի ես՝ ինձանից զոհ:

Նա նայեց ինձ սկզբում զարմացած, հետո քթի տակ ժպտաց.

-Աննան կուղեկցի,- շրջվեց, որ գնա:

-Սպասեք պարոն, -կանչեցի ես,- այսպես չի լինի:

Երկուսն էլ զարմացած նայեցին:

-Ասում եմ այսպես չի լինի, զանգե՛ք Առաքելյանին, նրա թույտվությունն էլ վերցրեք: Եվ առիթ է՝ ինձանից էլ ներողություն կխնդրի:

Աննան աչքերը պարզեց: Իսկ ահա այս պարոնը ժպտաց, գլուխը շարժեց, ապա.

-Հումորի զգացումը չկորցնելն, իհարկե շատ լավ է, բայց պետքարան կարծում եմ իրոք ուզում եք, այսքան ժամանակ

է այստեղ եք,- նույն խորամանկ ժպիտով պատասխանեց,- Աննա՛, ես ձեզ կսպասեմ<<Հինգում>>:

Նա հեռացավ, իսկ ես հետևեցի Աննային:

Այսքան անհամբեր ինձ դեռ չեմ հիշում, ես շտապում էի այն մարդու մոտ: Արդեն հասցրել էի մի քանի հարց տալ Աննային, բայց նա միայն կրկնում էր, որ իմ կյանքին վտանգ չի սպառնում, որ ինքը ցավում է այս ամենի համար, բայց Առաքելյանի օգնականն է և լավ ընկերը և ամեն բան կանի ի օգուտ իր ընկերոջ:

Մտանք այպես կոչված <<Հինգ>>: Սա հերթական սենյակներից էր նույն հարկում: Ավելի լուսավոր էր ու ավելի մեծ: Ինձ այս սենյակը դուր եկավ միանգամից. սա երևի այս տարօրինակ մարդկանց հանգստի անկյունն էր: Ձախ կողմում խոհանոցն էր, կոկիկ ու գեղեցիկ կահավորված, իսկ աջ կողմում սեղան, բազմոց երեք հատ տարբեր չափերի, մեծ հայելի պատին ամրացված, իսկ առջևում մեծ պատուհաններ: Այս սենյակն այնքան ջերմ ու հարմարավետ թվաց, որ ակամայից ապահովվության ու հանգստության զգացումով էի լցվում:

Այն մարդն, ում հետ քիչ առաջ փոքրիկ զրույց ունեցանք՝ նստած էր բազմոցներից մեկի վրա և ձեռքին ինչ որ թղթեր էին: Մոտենալով նրան՝ հիշողությանս մեջ պարզվում էր նրա դեմքը՝ նա այն մարդն էր, ով հասավ օգնության՝ ազատելով ինձ այն հրեշի ձեռքից:

Մեզ տեսնելով՝ տեղից վեր կացավ.

-Ես կփորձեմ որոշ հարցեր պարզաբանել, նստե՞նք:

-Ես ուզում եմ հասկանալ, թե իրականում ինչու՞ եմ այստեղ և ե՞րբ է բացատրություն տալու և ներողություն խնդրելու ձեր տնօրենն:

-Ամեն բան ասել՝ անհնար է: Դուք մեզ օտար եք, օտարներին կպատմե՞ք ամեն բան: Բայց ... .

-Բայց օտար լինելը չի խանգարում գերի վերցնել և ստել՝ ամուսնական պայմանագիր ստորագրել տալով.- ասեցի քմծիծաղով:

-Բացի օտար լինելուց նաև անհամբեր, համառ.- ժպտաց՝ նորից այն խորամանկ ժպիտով:

-Թո՛ղ ես այդպիսին լինեմ, իսկ դու՞ք ով եք այս թատրոնում:

-Ես ուղղակի անվտանգության ղեկավարն եմ: Բայց այս թատրոնի գլխավոր դերերից մեկը - ձերն է: Պիտի խաղաք օրինակելի կնոջ կերպար: Բայց արդեն դժվարանում եմ հավատալ ձեր այս բնավորությամբ:

Ես հազիվ էի զսպում բարկությունս:

-Այսպես, շարունակե՛նք: Երբ դուք երեկ եկաք աշխատանքի համար, ձեր գնալուց հետո, ձեր տվյալները քննելով՝ որոշվեց հենց ձեզ ընտրել: Դուք լրիվ համապատասխանում եք մեր պայմաններին: Եվ իհարկե չէինք ուզենա դիմել այսպիսի ծայրահեղ միջոցների, բայց սա պահանջվում էր:

-Փաստորեն ես ինչ-որ պահանջների համապատասխանում եմ, վա՛տ չէ: Ձեր այս խոսքերն ինչ-ո՞ր բան պետք է փոխեն, դուք այդպե՞ս եք կարծում:

-Կարծու՛մ եմ,- խիստ հայացքով ու խիստ ձայնով ասաց,- գումարն արդեն փոխանցվել է ձեր քրոջ հաշվին, և մի կլորիկ գումար էլ ձեր բանկային քարտին: Մենք ամեն ինչ գիտենք ձեր մասին: Գիտենք ձեր քրոջ ընտանքի հիպոտեկի մասին և դրա մարելը մեր փոքրիկ ապահովագրությունն է:

-Փաստորեն ես ձեզ օտար չեմ,- ասեցի ինձանից զոհ,- եթե դուք ամեն բան գիտեք իմ մասին, բա էլ ի՞նչ օտար: Հիմա ամենը կարող եք բացատրել, ապա՛, ապա՛:

-Դուք նաև շատ համառ եք:

-Դուք ինչու՞ եք մտահոգվում, համա՞ռ եմ ,թե՞ անհամբեր, թե՞ կոպիտ, հո դու՞ք չեք ամուսնանում իմ հետ, թող ձեր պարոն Առաքելյանը մտածի:

Աննան վեր կացավ տեղից ու նայելով այս՝ ասեց.

-Չէ՛, այսպես չի լինի, պիտի թողեիր խեղդեր, էսքան հիմա մեծ - մեծ չէր խոսա, ապա շրջվեց իմ կողմը,- մի դժգոհիր, լա՞վ: Այո՛, մենք քո կարծիքը հաշվի չենք առել, ստել ենք, Արամը սխալ վարվեց, բայց Խորենը ժամանակին հասավ չէ՞, կարելի է ասել՝ փրկեց քեզ: Նա ընթիանրապես քաղաքում չէր, երբ քո մասին տեղեկություններ էինք հավաքում: Նա վերջապես արձակուրդ էր գնացել, հազիվ որոշել էր հանգստանալ, բայց դու խափանել ես նորից, նորից ամեն բան, ընդ որում նրա հանգիստը, դու էլի ամեն ինչ փչացնում ես,նա ստիպված էր շտապ վերադառնար: Իրեն մի մեղադրիր, ամբողջը ես եմ կազմակերպել: Ի՛նձ մեղադրիր:

-Աննա՛,պետք չէ, զսպի՛ր քեզ,- խիստ ասաց Աննային այս

տղամարդը:

-Մենք մարել ենք քո քրոջ տան ամբողջ հիպոտեկը, հիմա քեզ հնարավորություն է տրվել ամուսնանալ հարուստ և գեղեցիկ մի երիտասարդ տղամարդու հետ, ապրել շքեղ կյանքով և ըստ ցանկության: Ինչ որ ուզես՝ կտրվի քեզ, ինչու՞ ես այսպես ըմբոստանում:

Հիշեցի,որ այս ընթացքում նա փորձում էր ինձ օգնել: Ես չեմ բարկանում, այլ նույնիսկ շնորհակալ եմ նրան, նա ավելի շատ բան ասեց թեկուզ բարկացած, քան այս տղամարդը հանգիստ տոնով:

-Աննա՛,- մոտենալով՝ Աննային ինչ-որ բան ասաց ցածրաձայն և Աննան դուրս եկավ:

☆☆☆☆☆

Ես կանգնել էի լուսամուտի մոտ. Սրանք հսկայական էին և արևի լույսն ամբողջությամբ տարածվում էր սենյակով մեկ: Իմ համար անսովոր, բայց շատ հաճելի էր: Ես նայում էի փողոցն անցնող մարդկանց, նայում էի երկնքին. Ի՜նչ հանգստություն, թվում էր՝ անվերջ կարող եմ նայել: Եթե չհաշվենք վերջին ժամերի իրադարձություններն, ապա կարելի էր նստել հարմարավետ բազմոցին, սուրճ և բլիթներ վայելել: Բայց ես մտածում էի Աննայի մասին: Թեև նա էր կազմակերպել այս անհեթեթությունը, բայց երևի նա իսկապես իր պատճառներն ուներ: Թէ՛ Աննան, թէ՛ իրենց աշխատակիցն արդարացնում ու պաշտպանում էին իրենց տնօրենին ու ընկերոջը, ես զգում էի, որ երկուսին էլ դուր չեր գալիս այս իրավիճակը, բայց ինչու՞ են

շարունակում և ինչու՞ հենց ես եմ այստեղ՝ դա դեռ հարց էր: Որոշեցի հասկանալ ու պարզել ամեն բան, իմ հոգու արկածախնդիր ու չարաճճի կողմը սկսում էր հավանել այս իրավիճակն: Այսպիսի արկածախնդրություն վերջին անգամ պատանեկան տարիներիցս եմ հիշում, երբ գնում էինք գյուղ ամառային արձակուրդների ընթացքում, և սիրելի իմ քեռակինն արգելում էր հեռու տանից կամ հողամասից խաղալը, մասնավորապես դեպի սարի լանջը գնալը, քանի որ այնտեղ ահռելի բարձր քարեր կային և մտահոգվում էր, որ քրոջս հետ կընկնէինք՝ ջարդելով ոտք կամ ձեռք: Քեռակինս անչափ բարի կին է, հոգում էր մեր մասին ամբողջ ժամանակ, ամեն բան մեզ թույլատրում էր, բացի սարի լանջ գնալն, իսկ մենք՝ արկածախնդիր և փոքր ինչ չարաճճի պատանիներ, գաղտնի գնում էինք՝ պարզելու թե էլ ի՞նչ կա այնտեղ, էլ ինչ են մեզանից թաքցնում, թռնում էինք բարձր քարերի վրայից՝ համոզվելով, որ վտանգավոր ոչինչ չկա: Այդ ժամանակները վաղուց անցել էին և ես սովորել էի ապրել մեծերի պես զգույշ, բայց վերջին ամիսներին հոգիս թռվռալ էր ուզում: Նորություն էի ուզում իմ կյանքում, հեղաշրջում, հոգնել էի նույնությունից: Պակաս բան էի զգում սրտիս խորքում:

Իսկ այս նորությունը փոթորիկի պես ահավոր էր և անմարդաբնակ կղզու պես հետաքրքիր:

***

Անվտանգության ղեկավարը նստած էր նույն տեղում: Եվ ես երբեմն նկատում էի ինձ վրա ուղղված նրա հայացքը:

Նա պլանշետով ինչ-որ բան էր անում, ապա գլուխն առանց բարձրացնելու՝ երբեմն աչքի տակով նայում էր ինձ: Նայում էր տարօրինակ՝ փնտրող և գտնելու հույսով լցված հայացքով: Գուցե իմ համաձայնությունն էր փնտրում կամ գուցե ՞ վախենում էր, որ փախուստի կդիմեմ: Ես փորձեցի էլ չնայեմ նրա կողմը, նրա հայացքն ինձ արդեն անհարմար էր թվում:

Որոշ ժամանակ անց Աննան ներս մտավ՝ բավականին հանգիստ: Մոտեցավ խոհանոցի կողմը, լուռ ցույց տվեց սուրճի բաժակը, և ես գլխով համաձայնվեցի: Նա փորձում էր առավելագույնս լուռ շարժվել: Մոտենալով բազմոցին նկատեցի՝ աշխատակիցը նստած քնած էր: Ահա Աննայի այս չափ զգուշության պատճառը: Ես նայում էի նրանց ու ինձ դուր էր գալիս իրենց փոխհարաբերություններն: Իրար հասկանում էին կես խոսքից և նույնիսկ լուռ: Չնայած ժամեր էր անցել ինչ այստեղ եմ, բայց այնպիսի զգացողություն էր, թե ճանաչում եմ իրենց վաղուց: Լուռ նստեցի նրա դիմացի բազմոցին: Նոր նկատեցի, թե որքան գեղեցիկ է այս տղամարդը. բոլո՞ր քնած մարդիկ են հաճելի ու այսքան անմեղ: Ես նույնիսկ կես բերան շնորհակալություն չասեցի նրան, որ օգնել էր ինձ: Աննան ձեռքը շրթունքներին սեղմելով, լռության նշան ցույց տալով, կանչեց իր կողմն .

-Ուզում եմ ներես ինձ, մեր համար դժվար ժամանակներ են հիմա, ես համոզված եմ, որ դու կհասկանաս մեզ և կօգնես: Իսկ նա (մի պահ լռեց՝ նայելով ընկերոջ կողմը) երեկվանից չի քնել, իբրև հանգստի էր գնացել, մեկ օր էր

ընդամենը մնացել: Երեկ արագ չվերթով վերադարձավ հենց իմացավ քո մասին: Այ որ դու մի քիչ խաղաղ լինեիր, ինքը կգնար կքներ իր սենյակում, նորմալ կհանգստանար:

-Ի՞նքն այստեղ է ապրում, դու՞ էլ:

-Մենք մեր բնակարաններն ունենք, բայց ավելի շատ այստեղ ենք ապրում՝ Արամի կողքին,- ժպտաց,- իմացար չէ՞ Արամը հենց Առաքելյանն է, նա այստեղ է ապրում և այսօրվանից դու նունպես:

- Նա հոգեկան խնդիրներ ունի՞:

-Չէ՛, ինչ ես ասում: Ուղղակի բարկացած էր, շատ էր բարկացած, ես էլ զարմացա, ասաց, որ քեզ շփոթել էր ուրիշի հետ, դրա համար էր այդքան կոպիտ:

-Դա նորմալ չէ, ուղղակի անընդունելի է:

-Համամիտ եմ, բայց նորից պիտի ասեմ, եթե մտածում ես, թե կփախչես ու ոստիկանություն կդիմես, ուրեմն իզուր է: Մենք ունենք տեսախցիկի տեսագրություն ու ձայնագրություն, որում երևում է, որ դու քո կամքով ես ստորագրել, քո կամքով ես բարձրացել իմ հետ վերև: Նույնիսկ հակառակը՝ մենք քեզ կարող ենք դատի տալ վարկաբեկելու և գումար շորթելու փորձի համար:

Ես ցնցված էի, ահա թե ինպես են մարդկանց ծուղակի մեջ գցում: Շփոթվելով նման խոսքերից՝ բաժակն ուժեղ դրեցի սեղանին, իսկ Աննան խիստ նայեց վրաս: Անվտանգության ղեկավարն աչքերը բացել էր իմ անզգույշ շարժումից: Վեր կացավ, ուսերը շարժեց.

-Աննա՛, իզուր է սուրճը քաղցած ժամանակ, դուք

առավոտից ոչինչ չեք կերել: Սոնան առավոտից ոչինչ չի կերել, իսկ ժամը բավականին ուշ է:

Զարմանքս ավելի էր. այստեղ ի՞նչ որ մեկը մտածում էր իմ մասին:

-Մեզ հյուծված հարսնացու պե՞տք է,- ասաց՝ նայելով իմ կողմը:

Աննան ժպտաց խորամանկ նայելով ինձ ու Խորենին.

-Իհարկե ո՛չ:

Իհարկե հիմարություն կլիներ մտացելը, թե այս մարդկանց մեջ կգտնվեր մեկն, ում հետաքրքիր կլիներ իմ կարծիքն, իմ հուզումներն, իմ հայացքներն այս իրավիճակի նկատմամբ, բայց դա նաև նորմալ է օտար մարդկանց կողմից, չէ՞ որ մենք ժամեր առաջ ենք ծանոթացել, նույիսկ նորմալ էլ չենք ծանոթացել: Երբ այս քնած ժամանակ գեղեցիկ թվացող, բայց արթուն ժամանակ՝ հաշվենկատ և նյարդայնացնող տղամարդը պատրաստվում էր դուրս գալ սենյակից, ես ձայն տվեցի .

-Սպասի՛ր:

Նա շրջվեց և մոտեցավ ինձ, այնքան, որ ես հետ քայլ արեցի .

-Ես չգիտեմ ձեր անունը:

-Խորեն է անունս,- ասաց պարզելով ձեռքը:

-Ասել, թե՞ ուրախ եմ ծանոթանալ ձեր հետ, ճիշտն ասած սուտ կլիներ:

-Գիտե՛մ, դա երևում է,- ժպտալով ասաց նա,- կարող ես ինձ դու- ով դիմել, Աննան արդեն ասել է, մենք այստեղ

միմյանց դու- ով ենք դիմում:

Չնայած ես ոչինչ չէի ուզում ուտել, բայց ստիպելով ինձ սնվեցի, որպիսի ուժ ունենամ պայքարելու:

Глава 3

Ես այսպես ասած իմ սենյակում էի արդեն, լուսամուտի վարագույրը բացել էի ամբողջությամբ, ի՜նչ գեղեցիկ էր մայրամուտը: Այստեղ նույնպես հսկայական լուսամուտ էր: Նստել էի գետնին փռված փափուկ գորգին՝ լուսամուտի մոտ: Գիշերը քնել այդպես էլ չկարողացա՝ մտածում էի, վերհիշում անցած երկար օրը: Աննան ասաց՝ հեռախոսս Խորենի մոտ է, կտա ինձ, երբ վստահ լինի, որ ոչինչ իրենց դեմ չեմ ձեռնարկի: Ի՞նչ պետք է անեի. իհարկե ոչի՛նչ: Ես որոշել էի ժամանակավոր ապրել այստեղ: Եթե ես ուզենայի, ինձ ոչ մի փակ դուռ չէր խանգարի: Բայց ստորագրել էի մի թուղթ, որն ինձ պարտադրում էր մի լավ մտածել: Եթե փախչել, ապա ինչպե՞ս եմ այդքան գումար ետ վերադարձնելու և իհարկե Աննայի ասածներն իրենցից սպասելի էին: Ու քրոջս մասին ո՞նց չմտածեմ: Իրենք ինձ ամեն ինչ տվել են, ոչնչի կարիք չեմ զգացել: Փափագում էի փոխհատուցել մի գեղեցիկ օր: Ահա երևի գեղեցիկ օրն եկել է: Ես դեռ կմնամ այստեղ ու կպարզեմ մնացած հարցերը: Հետո խելացի կծրագրեմ ու կգնամ այստեղից առանց տուժելու: Բայց հիմա ուրախ եմ, որ քրոջս տան գումարը մարվել էր ու հանգիստ էի զգում ինձ. Աննան ասաց՝ զանգել էր քրոջս, զգուշացրել, որ ինձ գլխավոր հաշվապահի հետ ուղարկել են գործուղման, հարմար ժամանակ կկապվեմ իրենց հետ. քույրս հավատացել

էր: Իսկապե՞ս: Նա այդքան հեշտությամբ չէր հավատա: Հիշեցի քրոջս խոսքերը. նա դեմ էր իմ այստեղ գալուն: Գուցե՞ քրոջս սիրտը զգում էր, որ անհեթեթ պատմության մեջ եմ ընկնելու: Եվ ինչպե՞ս են համոզել քրոջս, կամ ինձ ուղղակի ստում են:

Աչքերս բացեցի ուսիս հպումից: Աննան էր: Ես քնել էի գետնին: Մարմինս ցավում էր, գետնին քնելուց էր երևի: Արդեն ժամը 11 անց է: Հասցրել եմ քնեմ, լավ է:

-Սոնա՛, քեզ թողնեմ պատրաստվես, հետո եթե ուզենաս կգնանք Արամի մոտ:

-Լավ:

-Քեզ համար հագուստ եմ գնել:

-Շնորհակալ եմ:

Ահա նորից Արամի մոտ տանող միջանցքում ենք, սակայն այս անգամ այլ հույզերով՝ համարձակությունս փորձում էր խեղդել վեր բարձրացող վախին ու տագնապին: Մտանք սենյակ, նույնն էր այստեղ ամենն՝ աջ կողմում երևում էր տնօրենի սենյակը: Ես լուռ հետևում էի Աննային: Մտանք ներս և նստեցինք դիմացը: Կրկին անհարմար լռություն էր: Իր առջևում դրված թղթապանակը վերջապես փակեց ու դարձավ մեր կողմը:

-Չգիտեմ դու ի՞նչ ես մտածում, բայց ես իմ պատճառներն ունեմ այս ամենը գործելու համար, ու թող քեզ էլ չհետաքրքրի թե ինչու՞: Մենք ամուսնական պայմանագիր ունենք, կարծում եմ արդեն կարդացել ես:

Ես ուշադիր լսում էի: Նա կարծես խոսում էր հերթական

գործարքի մասին: Մենք կենդանի մարդիկ ենք, մի՞թե իրերի մասին է խոսում:

-Առաջիկա երկու ամիսը մենք քաղաքացիական ամուսնություն կխաղանք: Հետո օրինական կամուսնանանք: Մեր փոխարեն ամեն ինչ կպատրաստեն: Այս ամենը իմ ու քո համար միայն ձևական կլինի :

-Ձևակա՞ն,- ընդհատեցի,- իսկ իմա՞ստը, ես ուզում եմ հասկանում, և վերջապես ես բացատրություն եմ պահանջում, ես դրա իրավունքն ունեմ:

Նա լուռ նայում էր ինձ: Թվում էր՝ մտածում է՝ ի՞նչ պատասխանի: Այդ րոպեին Աննային զանգ եկավ: Աննան պատասխանեց, ապա ասաց Արամին .

-<<Անանց>>ընկերության փաստաբանն ու տնօրենի օգնականն են եկել:

-Մեր փաստաբանին էլ կանչի, ներքևում միմյանց ծանոթացրու, հյուրասիրիր, ասա՝ հիմա կմոտենա:

Աննան դուրս եկավ: Մնացինք միայնակ:

-Դու այստեղից դուրս չե՛ս գա մինչև համաձայնության չգանք:

-Լավ եկեք քննարկենք,- ինձ համար սա լավ հնարավորություն էր ինչ-որ բան պարզելու,- դուք ուզում եք, որ ես այստեղ որքա՞ն փակի տակ ապրեմ::

-Մինչև մեր պաշտոնական ամուսնությունը, դրանից հետո կտեսնենք: Դա կախված է, թե ինչքան վստահության արժանի կլինես: Դու երևի գիտես իմ դիրքը հասարակության մեջ, և քո պատճառով ասեկոսեներ

չեմ հանդուրժի, որքան քեզ խաղաղ պահես, այնքան վստահություն կվաստակես:

Ես փորձում էի ինձ հավասարակշռված պահել, բայց սա արդեն չափազանց էր: Նունիսկ նոր հարձակման վախն ինձ չէր կարող լռեցնել: Կանգնելով՝ գլուխս մի փոքր խոնարհեցի ու նայելով նրա աչքերին ասեցի.

-Շնորհակալ եմ անչափ ձեռքդ գերազանցությունն,որ թույլ եք տալիս շնչելու այս օդը ձեր հետ ,- ապա ուղղվեցի՝ պատրաստ փախուստի համար,- եթե ես այստեղ եմ, ուրեմն կա իմ ներկայության կարիքն: Իսկ եթե ավելի վերլուծենք, ինչ- որ չափով իմ կարիքն ունեք, ուրեմն բարի եղեք ավելի հարգալից լինել իմ նկատմամբ:

Նրա աչքերում հեշտությամբ կարելի էր տեսնել զարմանք և մի փոքր շփոթություն, ինչն ինձ ավելի ինքնավստահությամբ լցրեց: Նստեցի ու ավելի վստահ էի զգում ինձ.

-Իմ մարմնի ու կյանքի համար երաշխավորու՞մ եք:

-Քո կյանքի համար երաշխավորում եմ, մարմնի համար առավել ևս, ինձ դու հետաքրքիր չես, ու հետո էլ հետաքրքիր չես լինելու: Մենք շարունանելու ենք ապրել առանձին սենյակներում:

-Լա՛վ, մենք ունենք երկու՞ ամիս:

-Այո:

-Իսկ եթե դուք մտափոխվե՞ք:

-Չեմ մտափոխվի, հակառակ դեպքում դու այստեղ չէիր լինի:

-Իսկ եթե՞: Եթե երկու ամսվա ընթացքում մտափոխվեք, կարո՞ղ եք խոստանալ, որ չեղյալ կհամարենք մեր համաձայնությունն ու ես կգնամ այստեղից ազատ, առանց որևէ պարտավորության:

Նա քմծիծաղ տվեց.

-Եթե մտափոխվեմ, ուրեմն այո՛ ,թող այդպես լինի:

-Ես խաղաղ կմնամ այստեղ և չեմ էլ փորձի փախչել: Ուզում եմ ազատ դուրս գալ այս շենքից, երբ որ անհրաժեշտ լինի, ազատ եմ ուզում լինել:

Նա վեր կացավ տեղից, բարկացրեցի կարծես, ձեռքը խփեց սեղանին.

Այդ պահին դուռը բացվեց . ներս մտավ Խորենը:

-Խորեն լա՛վ եկար, տար այս օրիորդին:

-Ես էլ արդեն սկսում էի մտածել, թե դուք այդքան էլ խելագար չեք, բայց ո՛չ, առաջին կարծիքս ճիշտ էր,- շարունակեցի,- համաձայնեք և ես իսկույն կգնամ:

Նա գլուխը կախեց մի քանի վայրկյան, մտածում էր: Ես այդ ընթացքում հասցրեցի նայել Խորենին: Անհանգիստ էր, շունչն անկանոն, կարծես շտապել էր այստեղ: Նրա մի ձեռքում պլանշետ էր, մյուսում հեռախոսը, երկու սարքերն էլ ակտիվ էին, իսկ ականջին ականջակալ:

Արամը բարձրացնելով գլուխը՝ շարունակեց.

-Խորենն անվտանգության ղեկավարն է, այստեղ ամեն ինչը նրա ձեռքերում է: Եթե ինքն անվտանգ համարի, ուրեմն կարող ես դուրս գալ, ինչ ուզենաս կարող ես անել, բայց միայն Խորենի թույտվությամբ ու անվտանգության

ծառայության ուղեկցությամբ: Չէ՞ Խորեն:

Խորենը գլխով համաձայնության նշան արեց:

-Դուք ոչինչ չե՞ք մոռացել,- հարցրեցի:

-Հուսով եմ քեզ հնարավորինս քիչ կտեսնեմ:

-Դուք մոռացել եք էլի ինչ-որ բան:

-Սա ինձ խելագարության կհասցնի, ի՞նչ եմ մոռացել:

-Ներողություն խնդրել երեկվա համար:

Խորենը ծիծաղեց:

-Խորե՛ն:

****

Ես շրջում էի միջանցքում: Հերթով բացում ու նայում էի սենյակները՝ Խորենը ասել էր՝ որը բաց կտեսնես, ուրեմն իրավունք ունես մտնելու: Աննայի,Խորենի և Արամի սենյակները փակ էին: Մնացած սենյակները, որոնք բաց էին, ես չէի մտնում ներս. ուղղակի նայում էի ու անցնում հաջորդին: Նման էին իմ սենյակին, տարբերությունը պատերի գույներն էին: Այս սենյակները կարծես առանձին մեկ սենյականոց բնակարաններ լինեին, ամեն հարմարություններով, թերևս միայն խոհանոց չունեին: Սենյակները համարանշված չէին, ապա ինչպե՞ս էին Համար 5 կոչում այն սենյակը, որտեղ հանգստանեում էին: Եվ հետաքրքիր զգացում ունեի, զգում էի ինձ ազատ և ծանոթ միջավայրում: Իմ սենյակին հասա, բայց ներս չմտա: Ցանկացա գնալ Համար 5՝ հյութ խմելու, թեթև ինչ որ բան ուտելու կամ ինչ որ զբաղմունք գտնելու: Հեշտությամբ գտա: Հույս ունեի մեկին կգտնել այստեղ,

միայնակ ուտել չեմ սիրում: Հետո հիշեցի, որ բոլորը հանդիպման են ներքևում: Ուտելուս ցանկությունը կորավ՝ Աննան կգա, միասին կուտենք: Փոքրիկ սուրճի սեղանին հեռախոս էր դրված: Մոտենալով հասկացա, որ իմն էր: Ուրախացա: Նստեցի բազմոցին ու սկսեցի թերթել: Ես հեռախոսի կապվածություն երբեք էլ չեմ ունեցել, բայց այս ընթացքում մերոնցից նորություն չունեի: Բաց թողնված զանգեր կային, հաղորդագրություններ՝ նույնպես: Մինչ այս ժամ անհանգստանում էի, որ Խորենի մոտ էր եղել իմ հեռախոսն: Այս մարդիկ տարօրինակ են, ո՞վ գիտի ինչերի են ընդունակ: Բայց ամենը նույնն էր, նունիսկ նոր հաղորդագրություններս բացված չէին: Ի՜նչ լավ է, սիրտս թեթևացավ: Ուզեցի զանգել Նարինեին, բայց կանգ առա: Ես լրիվ չգիտէի, թե ի՞նչ էին ասել Նարինեին: Եթե քույրս հարցեր տա՝ կշփոթվեմ: Լավ կլինի սպասեմ իրենց: Հեռախոսը ետ դրեցի: Հենվեցի բազմոցին, կարելի էր մի քիչ քնել, մինչև լուսաբաց չէի քնել: Բայց, երբ աչքս նորից ընկավ հեռախոսիս վրա, կարծես գլխի ընկա իրենց այս խորամանկ քայլը: Գու՞ցե դիտմամբ էին այստեղ թողել: Ես ամբողջովին մենակ էի սենյակում, փորձում են երևի ինձ՝ փախուստի ելք կփնտրեմ, թո՞ ոչ: Ինչքան ուզում են թող փորձեն, ես ավելի խելացի կվարվեմ:

Աննայի՝ ուսիս հպումից զարթնեցի: Աննան ուրախ էր.

-Սոնա ջան ի՜նչ լավ էիր քնել, չէի արթնացնի, բայց մի բան ուտենք, ես իջնեմ գործերիս:

-Ինչ լավ է եկար,- ես ուրախ էի: Այս խառնաշփոթի

մեջ զարմանալիորեն Աննան հարազատ էր թվում ինձ, կամ գուցէ միակ աղջիկն էր այստեղ՝ դրանից էր:

-Գիտեմ ոչինչ չես կերել, քո համար եմ եկել: Դու երբ ուզում ես և ինչ ուզում ես կեր, մեզ մի նայիր: Ինչ էլ ցանկանաս, որ այստեղ չկա, գրիր այս բացիկների վրա, աշխատողը կգնի, եթե շտապ պետք կլինի ինչ-որ բան, զանգիր ինձ կամ Խորենին, մեր համարներն այս թղթին գրել եմ, հեռախոսդ էլ արդեն քո մոտ է:

-Լա՛վ, շնորհակալ եմ, բայց ո՞նց իմացար, որ ոչինչ չեմ կերել:

Աննան ժպտաց, բայց չպատասխանեց: Ճաշելուց հետո թեյ պատրաստեց, ասեց՝ թեյից հետո կգնա: Ես հարցրեցի, թե քրոջս ի՞նչ են ասել: Պատմեց, որ ասել է Նարինեին, թե Ամստերդամում եմ՝գործուղման, շտապ է եղել դրա համար չեմ հասցրել հրաժեշտ տալ: Հենց Աննայի մոտ զանգեցի քրոջս: Քույրս անհանգիստ էր. հարցնում էր՝ ինչպե՞ս է առողջությունս, ինչպե՞ս է հիշողությունս: Այն վթարից հետո ամեն անգամ հարցնում էր հիշողությանս մասին, երբ ես փոքր ինչ ուշանում էի: Ասեց, եթե մի օր էլ չզանգեի, ոստիկանություն կգնար: Ես երկար չխոսեցի, ասեցի հեռախոսահամարս ռոումինգով է, որ ինձ չզանգի, հարմար լինելուն պես, ես իրեն կզանգեմ:

Ահա այս հարցն էլ լուծվեց:

-Սոնա՛, դու չես ուզում փախչել, ի՞նչ լավ է: Դու դեռ կարծիքդ կփոխես մեր մասին, ես համոզված եմ: Չնայած մեր գործելու միջոցներին, մենք վատ մարդիկ չենք:

-Չգիտեմ:

-Եթե հա՞րց ունես, հարցրու:

-Համոզված չեմ ,որ հարցերիս բավարար պատասխան կտաս: Բայց ուզում եմ ինչ-որ գործով զբաղվել, ես այպես պարապ կձանձրանամ:

-Լավ մի բան կմտածենք:

-Եվ ինչու՞ եք այս սենյակին ասում Համար 5:

Աննան ջերմ ժպտաց, երևում է ջերմ պամություն կա այստեղ:

-Մենք չորս ընկերներ ենք՝ Արամը, Խորենը, ես ու Գոռը՝ մեր խենթը, մեր ուրախ ու լավատես ընկերը: Մենք մի փողոցում ենք մեծացել, միասին դպրոց գնացել: Մեր ընտանիքները մտերիմ են եղել միշտ, ամուր ընկերներ և գործընկերներ են եղել տարիներ շարունակ: Չնայած տարբեր մասնագիտություններ ենք ընտրել, տարբեր բաժիններում սովորել, միևնույն է անբաժան ենք եղել: Իհարկե մենք մեր անձնական կյանքն էլ ունենք, բայց բոլորը գնացին, բոլորն անցան, մնացինք էլի չորսով: Այստեղ բոլորս ունենք մեր սենյակներն, իսկ սա 5-ն է՝ ընդհանուր է, բոլորս մեկ տեղում, այս սենյակը մեր հանգստի, մեր զրուցարանի, մեր երբեմն վեճերի, մեր քննարկումների բույնն է:

Նա այնքան ջերմ էր խոսում: Սիրտս մի պահ հուզմունքով լցվեց:

-Ի՞նչ հետաքրքիր է:

-Այո, մենք և աշխատում ենք միասին, և շարունակում

մեր ընկերությունը: Գոռը հիմա գործուղման է, բայց շուտով կգա և նրան էլ կտեսնես: Համոզված եմ՝ կհավանես նրան: Իսկ դու Խորենի նկատմամբ ինչու՞ էիր այդքան կոպիտ, նա ընդանրապես չէր մասնակցել այս ամենին: Նա ամեն ինչ անում է քո հարմարավետության համար: Նա երկար վիճում էր Արամի հետ քեզ դիպչելու պատճառով, իսկ գիտես նրանք հազվադեպ են վիճում:

-Ես իրեն շնորհակալություն կհայտնեմ:

***

Խորենը քանի օր էր չէր երևում: Աննան ասաց՝ գնացել է մյուս մասնաճյուղ, այնտեղ խնդիրներ են առաջացել: Աննայի հետ ընկերացել էինք այս օրերի ընթացքում, կարծես թե վաղուց ճանաչելիս լինեինք իրար: Արամին մի քանի անգամ տեսել էի, միայն բարևում էինք միմյանց: Դա ինձ ուրախացնում էր: Ես մտածում էի նրա հետ վիճելն օգուտ չէ, պետք է կարողանայի այս ընթացքում մտքափոխ անել նրան: Դրա համար պետք է փորձել բարի հարաբերություններ ստեղծել նրա հետ որքանով որ հնարավոր լիներ: Առաջ գնալ էր պետք:

Արդեն կեսօր էր: Ես իմ սենյակում էի, երբ լսեցի խոսակցության ձայներ: Ես ակամայից դուրս եկա: Արամի աշխատասենյակի մոտից էր գալիս: Գնացի դեպի ձայներն: Աննան էր կանգնած միջանցքում և կարծես Խորենի հետ էին ինչ որ բան թեժ քննարկում: Խերենը դեպի իմ կողմն մեջքով էր կանգնած, իսկ Աննան դեմքով դեպի ինձ,և դեմքի անհանգստությունն ինձ էլ սկսեց անհանգստացնել:

Մոտեցա:

-Դու մինչև երեկո կլինե՞ս այնտեղ,- Խորենն անհանգիստ էր:

-Կհասցնեմ կարծում եմ, մի քանի թուղթ է, շուտ ձևակերպեմ, հավաքվեմ գնամ,-ասաց Աննան:

-Գո՛ղը, Գողը ու՞ր է, ե՞րբ կգա:

-Մի քանի օրից: Դե որ ինքը էստեղ լիներ ես չէի գնա էլի:

-Ոչինչ, մենք կհասցնե՛նք,- Խորենը ձեռքը դրեց Աննայի ուսին,- Աննա դու կարո՛ղ ես, ես վստահ եմ, դու միայն հիշիր իմ պատվերները:

-Լա՛վ Խորեն, սա էլ կհաղթենք:

Գործնական խնդիրներ ունեն, բայց ինչպես երևում է, չեն ընկճվում:

Խորենը հեռախոսը վերցրեց՝ զանգում էր: Աննան ինձ նկատեց վերջապես՝ ձեռքով բարևեց և ցույց տվեց դեպի Համար 5-ը: Խորենը բարկացած խոսում էր հեռախոսով.

-Դուք ինձ ասեցիք ապրանքը կլինի այսօր առավոտյան, ու՞ր է ապա: Ես ուրիշից պատվեր կանեի,- հետո նկատեց ինձ, գլխով բարևի նշան արեց, ես՝ նունպես,- Ես կսպասեմ երկու ժամ էլ:

Ես արդեն 5-ում էի: Աննան շտապ էր:

-Սոնա ջան, ես պիտի գնամ մի քանի օրով: Կզանգես, եթե կարիքս ունենաս: Խորենը քո սենյակի համար նոր գորգ է պատվիրել, կբերեն կփոխեն:

-Շնորհակալ եմ, բայց իմ սենյակինն էլ շատ գեղեցիկ է, փափուկ և նոր է երևում:

-Չգիտեմ, ասեց փափուկ չէ:

-Լավ:

Ես արագ սուրճ պատրաստեցի և Խորենի համար նույնպես, չնայած նա դեռ չէր մտել ներս: Աննան նստած ինչ-որ թղթեր էր դասավորում, հետո նշաններ էր անում դրանցում: Նա շատ շփոթված էր, ասաց, որ վախենում է մոռանա Խորենի հրահանգները: Ես սուրճի բաժակները դրեցի սեղանին և նստեցի նրանից հեռու, որպեսզի չխանգարեմ: Նա այնքան կլանված էր այդ թղթերում, որ չնկատեց առջևի սուրճը: Խորենը ներս մտավ.

-Ա՛ն, դու հասցրեցիր նույնիսկ սուրճ պատրաստես, ապրե՛ս:

Ես ժպտացի: Նա մոտեցավ .

-Բարև Սոնա:

-Բարև:

Նա վերցրեց սուրճի բաժակն ու նստեց ինձ մոտիկ բազկաթոռին՝ նույնպես Աննայից հեռու:

Նա էլ էր սկսել ինձ բարևել: Երևի որոշել են բարի վարվել իրենց հետ մի հարկի տակ ապրող գերու հետ:

-Ո՞նց ես:

-Լավ, դու ո՞նց ես: Ոնց տեսնում եմ խնդիրներ են առաջացել: Դու բարկացած էիր:

Նա այնպես նայեց ինձ, որ ես փոշմանեցի հարցիս համար:

-Ամեն ինչ լավ կլինի ու ապրես՝ ես էլ եմ լավ:

Ես էլ ոչինչ ասելու ցանկություն չունեի: Աննան առանց

սուրճը խմելու դուրս գնաց: Ես չհասցրեցի նույնիսկ հրաժեշտ տալ: Զանգեցին Խորենին.

-Բերե՞լ են, շատ լավ, բարձրացրեք վերև: Ես հիմա ընդառաջ կգամ:

Հետո վեր կացավ.

-Սոնա դու առայժմ այստեղ մնա: Քո սենյակում հիմա գորգը կփոխեն:

-Ես Աննային էլ ասեցի՝ իմ սենյակի գորգը հին չէ և ես գոհ եմ: Ի՞նչ կարիք կա փոխելու :

-Այո՛, կարիք չկա, բայց կփոխենք: Դու սովորություն ունես ժամերով գետնին նստելու, կամ քնելու գորգին՝ հատակին: Ես չեմ ուզում չոր լինի կամ հիվանդանաս:

-Ես...

Նա չթողեց, որ շարունակեմ.

-Թե՞ այդպես հույս ունես մրսել, հիվանդանալ: Այդպես հաստատ ոչինչ չես փոխի:

Սիրտս սեղմվեց, կոկորդս նույնպես: Ես զսպում էի ինձ, որ հանկարծ մի կաթիլ արցունք չթափեմ նրա ներկայությամբ: Բայց սիրտս, ապա և աչքերս լցվում էին առանց իմ կամքը հարցնելու, դրա դեմ անզոր էի: Նա նայեց աչքերիս մեջ, հետո շրջվեց, սեղանից ինչ որ բան վերցրեց ու գնաց: Կեցցե՛ս Սոնա, նրա մոտ արցունքներդ զսպեցիր: Բայց երբ մնացի մենակ, ի՞նչ թեթևություն:

Գլուխս իջեցրեցի ծնկներիս և ազատություն տվեցի սրտիս, աչքերիս, որ չգիտես վիրավորանքից էր լալիս, թե՞ չհասկացված լինելուց:

Միջանցքի շարժը նվազում էր: Երևի արդեն վերջացնում էին: Մի քանի րոպե անց ներս մտավ տիկին Վարդուհին՝ մաքրուհին:

-Սոնա ջան վերջացել են, արդեն ամեն ինչ պատրաստ է, Խորենը ասեց, որ կարող ես վերադառնալ երբ ցանկանաս:

-Շնորհակալ եմ:

Ես վերադառնալ չէի ուզում: Այդ չարաբաստիկ գորգը տեսնել չէի ուզում: Այո՛, ես փոքրուց սիրել եմ հատակին նստել, նկարել ինչ-որ բան, չնայած, որ միշտ չէր հաջող ստացվում: Դրանում ոչ մի կասկածելի կամ զարմանալի բան չեմ տեսնում: Որոշ մարդկանց ճանաչում էի, որոնք նունպես սիրում էին հատակին նստել, էլ չեմ ասում Ասիական երկրների ժողովուրդի ապրելակերպի կամ սովորույթների մասին: Կամ այս մարդը որտեղի՞ց իմացավ իմ հատակին քնելու կամ ուղղակի նստելու մասին: Գուցե Աննան էր ասել. նա տեսել էր ինձ քնած գորգին: Կամ եթե ես այն մտադրությունն ունենայի, ինչում նա ինձ մեղադրում էր, ապա կարելի կլիներ նրան արդարացնել:

Մի քիչ այս ու այն կողմ շրջելուց հետո գնացի իմ սենյակ: Գորգը սենյակի տեսքն ավելի էր գեղեցկացրել: Գեղեցիկ էր ու ավելի փափուկ: Ամբողջ սենյակը չէր ծածկում, միայն մահճակալից դեպի լուսամուտ և դեպի բազկաթոռ:

Գիշերվա մեկն էր, երբ արթնացա: Ուզեցի դուրս գալ այս չորս պատերից, բայց Աննան այստեղ չէր. կանգ առա: Աննան իմ կողքի սենյակում էր ապրում և ես ինձ ավելի հանգիստ էի զգում: Բայց ոչի՛նչ, համարենք դեռ կեսօր է,

ի՞նչ տարբերություն: Ես վճռական դուրս եկա դեպի Համար 5-ի կողմն, իբրև մի գրամ անգամ չեմ վախենում: Միջանցքը լու՛սավոր էր, ու ոչ մի շունչ: Սիրտս հանգստացավ: Մտա ներս ու անմիջապես գնացի սառնարանի կողմը՝ մի կտոր պանիր վերցրեցի, հյութ լցրեցի, շրջվեցի դեպի սենյակը և քարացա. Խորենն այստեղ էր՝ բազկաթոռին պառկած ու քնած: Ես արագ - արագ կերա մնացորդը պանրի, հյութը խմեցի, և պատրաստվում էի արագ և աննկատ անհետանալ այդտեղից: Բայց ինչ-որ ուժ կանգնեցրեց ինձ իմ տեղում: Նրա վրա վերմակ չկար զցված և դա չգիտես ինչու ինձ դուր չեկավ: Սկսեցի անհանգստանալ նրա համար: Ես փակեցի աչքերս մի պահ, որ մոռանամ տեսածս, բայց գիշերը հանգիստ քնել չէի կարողանա: Այո՛, նա շորերով էր քնած դժվար մրսեր, բայց այդպես չէր կարելի թողնել, պետք է ծածկել: Զգույշ կծածկեմ, ինքը ինձ չի էլ նկատի: Զգույշ վերմակը հանեցի բազմոցին կից դարակից և մոտեցա Խորենին: Քանի մոտենում էի, այնքան իր տեսքն ինձ դուր չէր գալիս: Երեսի գույնը փոխված էր, ճակատին ու երեսին քրտնքի կաթիլներ էին երևում: Երբ վերմակը գցում էի վրան, նա շրջվեց դեպի իմ կողմը և վերմակի հետ իմ ձեռքն էլ բռնեց: Նրա ձեռքը վառվում էր: Քնած էր, բայց անհանգիստ էր ու տաք: Կանգնեցի ու մի պահ մնացի կանգնած: Ի՞նչ անել: Ի՞նչ: Զանգել Աննա՞յին, բայց ինքն այնտեղից ի՞նչ պիտի աներ: Ես կարող եմ ջերմությունն իջեցնել, չեմ կարող իրեն այս վիճակում թողնել, պետք էր մի բան մտածել: Հիշեցի, թե որտեղ էր Աննան պահում

դեղատուփն՝ ինձ մի անգամ գլխացավի դեղ էր տվել: Բացեցի, ի՜նչ լավ էր, այստեղ ջերմիջեցնող կա: Դեղն ու ջուրը ձեռքումս կանգնած՝ նայում էի Խորենի անպաշտպան մարմնին: Ծնկեցի նրա առջև, գլուխը բարձրացրեցի ու համոզեցի բերանը բացել: Ստացվե՛ց: Բայց այս դեղը մինչև սկսի ազդել, ես ո՞նց թողնեմ գնամ: Տեսա, որ բաճկոնը դեռ հագին է: Հիշեցի՝ ջերմության ժամանակ լավ է, որ հիվանդը թեթև հագնված լինի, բաճկոնը պետք էր հանել: Փորձեցի վերհիշել նաև, թե քույրս ոնց էր վարվում երեխաների հետ, երբ նրանք հիվանդանում էին: Բաճկոնը զգույշ հանեցի հագից: Ինքը շատ թույլ էր: Վերցրեցի ջրով լի թասիկ և փոքր սրբիչ: Թաց սրբիչով մաքրեցի երեսը, հետո նորից թրջեցի, քամեցի ու դրեցի ճակատին: Ինքը զգաց ճակատի սառնությունն, ունքերը սեղմեց ու փորձում էր աչքերը բացել, բայց իզուր՝ շատ թույլ էր: Ես ձեռքովս պահում էի սրբիչն իր ճակատին: Սրբիչն արագ տաքացավ, սկսեցի էլ ավելի վախենալ: Աստված իմ օգնի՛ր այս մարդուն: Սրբիչը նորից թրջեցի, նորից դրեցի ճակատին: Ձեռքերը նույնպես վառվում էին: Ցուցամատով սեղմեցի ձեռքը, տեսնելու՝ զգում է նա հպումներս: Բայց շարժ չկար: Ես համարձակվեցի շփել նրա ձեռքերը ջրով: Ճակատի սրբիչը նորից փոխեցի: Հեռախոսս գտա՝ որոշեցի զանգել Աննային, թեկուզ ուշ էր և ասում են՝ մեզանից բավականին հեռու էր գնացել, բայց հիմա մենք զգում ենք նրա կարիքը: Շատ նեղվեց Խորենի համար, հարցրեց՝ կարող եմ ջերմիջեցնող տալ: Ես ասեցի, որ տվել եմ և սառը թրջոցի մասին էլ: Նա

ուրախացավ: Ասեց՝ Խորենն արդեն որոշ ժամանակ է հանգիստ չունի, իսկ վերջին երկու օրը չի քնել, իրենց ցանցերում լրտես էր հայտնվել, կարևոր տվյալներ են փոխանցում մրցակիցներին: Հետո խնդրեց, որ ցույց չտամ, թե գիտեմ:

Խորենի վիճակը սկսում էր լավանալ: Բայց ես դեռ չէի համարձակվում հեռանալ: Նախ, որ միևնույն է հանգիստ քնել չէի կարողանա՝ սիրտս զարմանալիորեն անհանգիստ էր նրա համար: Հետո էլ՝ նա բռնել էր իմ մատներս, երբ ես թրջում էի ձեռքերը: Նա հիվանդ էր և սա բնական ռեակցիա էր: Հիշեցի՝ ես էլ Նարինեի ձեռքն էի բռնում, երբ ջերմում էի: Պետք է ուղղակի փորձել ձեռքս զգույշ ազատել: Նա այնքան ամուր էր բռնել, որ դժվարություն էր առաջացնում: Այս տկար վիճակին, այսքա՞ն ուժ որտեղից հայտնվեց: Ես որոշեցի սպասել մի քանի րոպե, հենց թուլացնի՝ արագ կհեռացնեմ ձեռքս: Խորենը սիրուն տղամարդ էր, եթե միայն այսքան վատը չլիներ: Մազերը մուգ էին, խիտ ու տղամարդու համար միջին երկարության: Նրա մազերը միշտ խիստ դեպի ետ էին սանրված, բայց այժմ՝ խառնված լինելով՝ ավելի խորհրդավոր հմայք էին հաղորդում նրա գունատ, հիվանդ տեսքին: Նունիսկ մտքովս անցավ, թե խառնված մազերն ավելի կսազեր նրան՝ որպես մշտական սանրվածք: Այս չափ անհարմար ժամանակ ինչեր էին մտքովս անցնում՝ ես ամաչեցի ինքս ինձանից: Այս օրերի ընդացքում չէի համարձակվում ուշադիր նայել նրա կողմն՝ ինձ տարօրինակ անհարմար էի զգում, կամ նա երբեմն առավել խիստ էր

երևում, քան Արամը:

Հենց փոքր ինչ թուլացնում էր ձեռքը, ցանկանում էի ազատվել, նորից սեղմում էր: Ձեռքերը գեղեցիկ էին ու մեծ: Իմ փոքր մատները հեշտությամբ տեղավորվել էին իր ափի մեջ: Բայց ես վերջապես կարողացա ազատել մատներս: Եթե մի քիչ էլ սպասեմ, կարող եմ նորից ջերմիջեցնող տալ ու գնալ, թե չէ այսպես չի կարելի թողնել ու գնալ: Ահա և ջերմաչափն էլ գտա: Որոշեցի ջերմաչափն ուղղակի դնել նրա ձեռքերի մեջ: Մի փոքր անց տեսա 38 էր: Նորից ջերմիջեցնող տվեցի, հավաքեցի և տեղավորեցի հաբերը իրենց տուփում: Սրբիչը վերջին անգամ թրջեցի, դրեցի ճակատին, մի անգամ էլ ուշադիր նայեցի նրան. գուցե էլ այսպիսի առիթ չլինի, ու գնացի քնելու:

Конец ознакомительного фрагмента.

Текст предоставлен ООО «Литрес».

Прочитайте эту книгу целиком, купив полную легальную версию на Литрес.

Безопасно оплатить книгу можно банковской картой Visa, MasterCard, Maestro, со счета мобильного телефона, с платежного терминала, в салоне МТС или Связной, через PayPal, WebMoney, Яндекс.Деньги, QIWI Кошелек, бонусными картами или другим удобным Вам способом.